ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 821.19.0

ԲՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՐ-ԴՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր և արտահայտություններ. «Նոր դար», ազգային պահպանողականներ, ազատամտականներ, ազգի բարոյական նկարագիր, բարոյական սկզբունքի գերակայություն, պարտքի գիտակցություն:

«Թող կեղծավորություն և ավելորդ համեստություն չնկատվի, եթե ասեմ, որ իմ գրական ունակությունների մասին ես միշտ շատ համեստ կարծիք եմ ունեցել, և այս 45 տարվա ընթացքում համեմատաբար այնքան քիչ բան եմ տվել մեր գրականությանը, որ պարզապես խիղճս թույլ չի տալիս ինձ արժանի համարելու այն մեծ պատվին, որ այս երեկո տվիք ինձ»,- իր գրական գործունեության 45-ամյա հոբելյանին իր գրական-ստեղծաբանական ժառանգությունն այսպես գնահատեց Նար-Դոսն,- ապա միայն իրեն հատուկ ծայրահեղ համեստությամբ իբրև արդարացում հավելեց, թե. «Կարող եմ ասել, որ երիտասարդությանս ամենալավ տարիները, օրվա աշխատանքից ամենալավ ժամերը ես անց եմ կացրել զանազան սև աշխատանքներով այս կամ այն խմբագրատանը, այս կամ այն տպարանում և ապա մնացած ժամերին, արդեն ֆիզիկապես ու մտավորապես հոգնած, նստել եմ, որ մի բան գրեմ»[1]: Իսկապես:

1890-ի հունիսի մեկից Նար-Դոսը «Նոր-Դարի» քարտուղարն էր մինչև լրագրի փակումը՝ 1906 թվական: Մի կատարյալ ուժասպառող, զզվելի, հոգեմաշ ու գրեթե անվարձահատույց աշխատանք, որ «սեփական գրական երկերիս համար թողնում էր միայն գիշերվա ժամերը, և այդ ժամերին եմ գրել գրական երկերս մեծ մասամբ»: 13-ից 18 թվականները քարտուղար էր

[1] Նար-Դոս, Երկերի ժողովածու չորս հատորով, Երևան, 1990, «Նար-Դոսի ճառից», էջ 72-73:

Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթում, հեղափոխությունից հետո՝ սրբագրիչ տարբեր տպարաններում:

Նար-Դոսի գրական գործունեությունը կապվում է «Նոր Դարի» հետ. այստեղ են լույս տեսել նրա հիմնական ստեղծագործությունները: 1885-ին՝ «Բարերար և որդեգիրը», 1886-ին «Ճշմարիտ բարեկամը», ապա «Նունեն», 1887-ին «Քնքուշ լարերը», 88-ին՝ «Աննա Սարոյանը», 90-ին՝ «Զազունյանը»: Պատկերացնել Նար-Դոսին հասարակական հարցադրումների բախման կիզակետում, պատմական ժամանակը ձևավորող բանավեճերին մասնակից ու առավել ևս ուղղորդող կամ վկայագրող՝ պարզապես անհնար է ու անհավանական:

Այս պարագայում սոցիալական, հասարակական, պատմական ու անհատական իրականությունները, սեփական կենսագրության մեծ ու փոքր փաստերի, դրվագների չհեռացող ներկայությունը ստեղծագործական ընթացքի մեջ պարզապես հայտնաբերում են աշխարհայացքային ու գեղագիտական այն առանցքը, որի շուրջ և ձևավորվում է ստեղծագործող անհատի գրողական տեսունակությունն ու ներքին գնահատականը իրականության հարցադրումների վերաբերյալ: Ծայրահեղորեն համեստ ու ինքնամփոփ, գրեթե լուսանցքի մարդ ու ինքնահալածյալ դիտորդ, Նար-Դոսը, սակայն, իր ներսում ազգային խնդիրների ու, առավելապես գրական չափանիշների իր հստակ հանգանակն ուներ, որ թեև երբեք ուղիղ խոսքով չբարձրաձայնվեց՝ գրողին շատ հաճախ դատապարտելով ներքին հակասությունների ու ծանր ճգնաժամի, բայց որոնց մետամորֆոզը՝ մերթ իբրև գեղարվեստական փոքրիկ փաստ, մերթ իբրև նշանակիր դիպված, երբեմն որպես գաղափարական ներփակ, անանուն հարցադրում, մենք տեսնում ենք Նար-Դոսի ստեղծագործության ողջ համապատկերում:

Ընդհանուր հարցադրումը, որ ուղղություն էր տալիս 80-ական թվականների հասարակական ու մտավոր շարժմանը, ազատականացումն էր՝ իր համազգային բովանդակությամբ ու գրական-ստեղծաբանական հղումով:

Բուրժուականացած հայ հասարակության իդեալը ազատամտականները որոնում էին եվրոպական հեռուներում, ուր «բարոյական հեղաշրջման» մոտիվը ենթադրում էր բարքերի արտասովոր հեղաբեկում, որ հայոց ազգը կբարձրացներ տնտեսական, բարոյական ու մտավոր զարգացման եվրոպական աստիճանին: Ազգային-պահպանողական թևը, մասնավորապես «Նոր-դարը» այն գիտակցությամբ, թե անհնար է շրջանցել «ժամանակի նշանը», հնի ու նորի բախման էլեգիայում թեև կանխագուշակում էր ազգի բարոյական նկարագրի տրոհումը, բայց ազգային ինքնության պահպանությունն, այնուամենայնիվ, կապում էր «հայոց ավանդական ու բարոյական սեփականության»,

ազգային ինքնությունը կազմավորող սուբստանցների՝ կրոն,լեզու, ընտանիք, բարոյականություն պահպանության հետ: Ազատամիտ-լիբերալները ձգտում էին նոր ձև ու բովանդակություն տալ ազգային կյանքին՝ հայոց գոյության հազարամյա առասպելին փորձելով պատվաստել ազատականացման ու ազգափրկության եվրոպական ուտոպիան: Այն, ինչ հավակնում էր շարունակության, պարտադրված էր ազատականացման կամ «ինքնաքննության»՝ «մատնացույց անելու հասարակության վերքերն ու սեփական տգիտությունը»: Այս տեսանկյունից «ինքնաքննության» սթափ հայացքով արմատական փոփոխության էին ենթակա բոլոր այն սուբստանցները, որոնց վրա կարելի էր կառուցել ինքնության հայկական հատկանիշները՝ լեզուն, կրոնը, եկեղեցին, գրականությունը. «Կյանքի մեջ երկու կողմ կա,- գրում էր Արծրունին,- նյութական և մտավոր կողմեր: Այդ երկու կողմերը հարկավոր է զարգացնել:

Նյութական կողմից մեր ազգին հարկավոր են երկրագործություն, վաճառականություն, արվեստ, վաճառաշահություն և ճանապարհներ: Մեր բարոյական կյանքը զարգացնելու համար մեզ հարկավոր են ուսումնարաններ (աղջիկների և տղաների), գրականություն, օրագիրներ, թատրոններ…»[2]:

Հասարակական մտքի բանավեճը մեկ այլ կետից էին սկսում ազգային պահպանողականները: Նրանց համար ազգապահպանության կարևորագույն սուբստանցի՝ բարոյական ավանդույթի ու դարավոր արժեհամակարգի վրա կառուցված ընտանիքի ու ընտանեկան հարաբերությունների պահպանումը նույնանում էր ազգային անհատականության գիտակցման ու շարունակության ավանդույթի հետ: Սա ժամանակի գրողներից շատերի համար գրական-գեղագիտական մասնավոր հարց չէր, այլ ազգային ինքնության ու գոյության հայկական չափանիշները ստուգող փիլիսոփայական հարցադրում, որ իր անդրադարձն է գտնում նրանց գեղարվեստական ստեղծագործության մեջ ու ձեռք բերում միավորող գաղափարի նշանակություն. «Ազգերի ու ժողովուրդների գոյության հիմքը դրված է ամուսնական կապի, ընտանիք բառի կոնկրետ հասկացողության վրա,- գրում էր «Նոր Դարը»: Ընտանիքն է կազմում հաստապինդ ծառի արմատները. կտրեցեք այդ արմատները, բաժանեցեք բունը կենդանության այդ աղբյուրից, և ծառը առմիշտ կդադարի շնչելուց»[3]:

---

[2] «Գրիգոր Արծրունու աշխատությունները» , հ. Ա, էջ 193:

[3] «Նոր Դար», 1903, թ. 13:

Ահա այս բանավեճի կիզակետում կազմավորվեցին Նար-Դոսի աշխարհայացքն ու գրական նախասիրությունները գրողն, իր գրական նախափորձերն իսկ սկսում է կայուն գաղափարի որոշակիությամբ, որովհետև համոզված էր, որ. «Հայոց վիպասանությունը պետք է իդեալներ տա, որովհետև քաղաքական ու սոցիալական հայտնի անբարեբաստիկ պայմանների մեջ հոգին ու զգացմունքները բթացած հայը ավելի քան մի ուրիշ ազգի մարդ, կարոտ է իդեալների» (Մինաս Բերբերյանին, 1893, 18 սեպտեմբերի):

Իդեալի որոնման ճանապարհն արդեն տրվել էր նրա գրողական տեսունակությանը, ինչը չի ասվում գրական նախորդ ունենալու, որևէ մեկի հետևորդը լինելու մասին: Գրական շկոլայի տեսակետից զարմանալիորեն նա իր նախորդը չունեցավ գրականության մեջ, ու ոչ էլ որևէ մեկին համարեցին նրա ավանդույթի շարունակողը: Ինքն իր ներսում ծանրագույն ճիգով ստեղծեց ինքնակա, ինքնագո իր գրականությունը, որ, անսահման գեղեցիկ ու խորը, երբեք չհամեմատվեց որևէ մեկի հետ, երբեք չդավաճանեց իր ուրիշությանը: Աշխարհի հիվանդ կրքերից դուրս, հիվանդ իրականությունից ձերբազատված, մաքուր, նա գտավ իր հորինած աշխարհը, մարդուն, որի ներսն էր իրեն հետաքրքիր ու հոգեբանական նուրբ, անասելի գեղեցիկ պատմություններ ստեղծեց այդ գողտրիկ տարածքի ու մաքուրին մերձենալու անվերջ ձգտումի մասին:

Ազգապահպան իդեալների որոնման ստեղծագործական ճիգը գտել էր աշխարհայացքի փիլիսոփայական ելակետը, որ ըստ ակադեմիկոս Սարինյանի[4], մեծապես աղերսվում է Կանտի ու Շոպենհաուերի «բարոյական հարստության» ու «պարտքի գիտակցության» էթիկական ուսմունքին:

Իսկապես, ժամանակը ճանաչում էր իր փիլիսոփաներին, ու նորմավորված էթիկայի ռացիոնալիստական այս հայեցակարգը նաև հայկական իրականության մեջ է քննության տեսադաշտ առնում սիրո, երջանկության, եսի բավարարվածության ու պարտքի, պարտազանցության հայեցակետերը՝ մաքուր բանականության գերակայությամբ հաստատելով բարոյական սկզբունքի ու հասարակական պարտքի անխախտելիության անհրաժեշտությունը: Ահա ազգային-պահպանողականության հայեցակարգը ձևավորող այս գաղափարների, բնության ու բարոյականության հակասության, անձնական երջանկության ու պարտքի գիտակցության դրամատիկ բախման երբեմն ուղղագիծ, երբեմն

[4] Ս. Սարինյան, «Հայոց գրականության երկու դարը», գիրք հինգերորդ, Երևան, 2009, էջ 80-85:

մետամորֆոզացված, ներհայաց արտահայտությունն ենք տեսնում Նար-Դոսի առաջին շրջանի գործերում՝ «Ճշմարիտ բարեկամ», «Քնքուշ լարեր», «Զազունյան», որին իբրև հարակից, երկրորդված գաղափար հանդիպում ենք նաև «Պայքար» վեպի անչափ գեղեցիկ հղացքի մեջ:

«Քնքուշ լարեր» վիպակում այլաբանությամբ խորագրված մի հատված կա, որ Նար-Դոսն անվանել է «Սեր, խիղճ և ուղեղ»: Այն առանց այլևայլության բնաբան կարող է ծառայել մարդկային ամենապարզ երջանկության ու բարոյական պարտքի, պարտազանցության հանգույցում հայտնված հերոսների մասին Նար-Դոսի պատումների համար, որ լարված, դրամատիկ հոգեբանական վիճակների ու մարդկային հարաբերությունների լուծումների համոզչականությամբ ձգտում են գրեթե կատարելության: Նուրբ, անչափ նուրբ է գրողի աչքը. փոքրիկ դիպվածի, դեպքի մեջ ներառելով ներաշխարհի շարժման խոր հակասականությունը, գրողն, այնուամենայնիվ, չի կտրտում, չի մասնատում աշխարհի, հերոսի իրականության ամբողջական պատկերը, այլ հայտնաբերում է հավատավորի այն ճիգը, որ բանականության փորձառնությամբ ձգտում է դեպի նախասկզբնական իդեալի ամբողջական աշխարհատեսության դաշտը: Այս հատվածը կոնցեպտուալ առումով հայտնաբերում է այն սուր բախումը, որը գրողը տեսնում է ավանդական արժեհամակարգի ու երջանկության ձգտման, մարդկային բնության ներքին կանչի ու բարոյական տաբուի հանդիպման հանգույցում:

«Հավիտյան երջանկություն,- աղաղակեց սերը:

-Անվերջ թշվառություն,- աղաղակեց ուղեղը:

-Պարտազանցություն,- աղաղակեց խիղճը»,- ահա այսպես, ներքին բարոյական կռվի, հոգեբանական ճգնաժամի, ինքնաքննումի ու հակասության ծայրաբևեռների մեջ խիստ չափազանցված, բևեռացված է գաղափարը, որի շուրջ և ծավալվում է սյուժեի շարժումը: Բայց մինչ այդ նախորդել է մի ուրիշ պատմություն, որը թերևս արժե հիշել ըստ ամենայնի:

Առաջինը «Ճշմարիտ բարեկամը» վիպակն էր, որ լույս տեսավ 1886-ին, «Նոր դարում» ու որը հեղինակի կազմած երկերի ցանկում համարվում էր տպագրության ոչ արժանի:

Մի կատարյալ ներդաշնակ «անգիտության» մեջ էր ընթանում Եղիսաբեթի ընտանեկան կյանքը մինչև այն ճակատագրականորեն ողբերգական պահը, երբ հանդիպեց ամուսնու նախկին ընկերոջը՝ Սուրեն Արևելյանին: Անակնկալ հանդիպումը մեն-մի ակնթարթում ոչնչացրեց Եղիսաբեթի հոգում թանկ ու անփոխարինելի մի բան, անանուն մի զգացմունք, որ կամ կապվածությունն էր ամուսնուն, կամ սովորույթի ուժը, որ անիմաստ ու չգիտակցված համակերպության մեջ սպանում էր օրը օրի, տարին տարվա հետևից: Գիտակցե՞ց, թե ոչ Եղիսաբեթն այն տիեզերական,

ամենակործան ողբերգությունը, թե, ցավոք, մարդը միշտ է փնտրում ցանկալին, բայց վերցնում միայն հանդիպած պատահականը: Գուցե կամ թերևս ոչ, քանզի այն, ինչ այցի էր եկել իրեն, բանականորեն անվերլուծելի էր, քննության չտրվող, բայց դաժանությամբ կատարյալ ու պարտադրող: Թվում էր, թե ոչինչ չէր կարող տրոհել փոխադարձ հարգանքի ու հավատարմության վրա խարսխված այս ընտանիքի ամբողջությունը, եթե միայն Եղիսաբեթն ինքն իր ներսում չվերապրեր տրոհվող տիեզերքի ու ավանդույթի փլուզման ողբերգական սարսափը: Ի՞նչ էր սա, այս Թաքունը, Անանունը, Անասելին, որ անլցելի ճեղք էր առաջ բերել Եղիսաբեթի ներաշխարհում՝ նրան դնելով բնության ներխուժման, բնազդի արթնացման ու բարոյական տաբուի, պարտքի գիտակցության բախման կիզակետում: Անուն ուներ, որ միացնում էր ընդհատ-ընդհատ հանդիպումների, անաստված, բայց աղոթքանման ասքի պատառիկներն ու իրենով ծածկում մնացած ամեն ինչ: Սուրեն Արևելյանը: Այն, ինչ կինն էր իր մեջ, արթնացած կինը, մթագնում էր բանականությունն ու սիրելու սպասումով լցնում ամեն մի բջիջը, անմխիթար սքանչացումի ու ցանկության հաճախանքի մեջ ոչնչացնում բարոյականության հաստատուն պատնեշը՝ գուժելու, թե «այդ քաղցր է» ու «թող այսուհետև ինչ որ ուզում է, լինի, բայց ես զգում եմ, որ առանց նրան ինձ համար դժվար է ապրել»: Հակառակ բևեռում խիղճն էր, մարդկային գոյության անխիղճ ու անաստված այդ վեհապետը, որ խարազանի պես մտրակում էր սիրված լինելու, սիրելիի կողքին լինելու երազանքը:

Ահա զգացմունքների ողբերգական լարման այս կիզակետում դեպի գաղափարը տանող բաց տարածքը Նար-Դոսը լցնում է հոգեբանական նուրբ շարժումով՝ մարդկային ճակատագրերի ներքին փլուզումները երբեմն թաքցնելով բնավորությունների կարծրության, երբեմն աֆեկտիվ, ծայրահեղորեն անհավասարակշիռ, անկանխատեսելի պահվածքի խորխորատներում. «Ես չեմ մեղադրում ձեզ, որ դուք ուժ չունեք, որ դուք թույլ եք… դուք դրանում այնքան մեղավոր չեք… մեղավոր է բնությունը, դեպքը, հանգամանքը…»: Մարդկային մեղքն ու բնության շեղումը կարելի ու պետք է բառնալ բանականությամբ ու կամքով, քանզի «ինչ տեղ կա հաստատակամություն, այնտեղ ոչինչ խոչընդոտ չի կարող լինել»,- իրադրությունն այսպես է գնահատում Սուրեն Արևելյանը, իսկապես ճշմարիտ մի բարեկամ, որն իր մեջ մեռցնելով սիրտը, արթուն է պահում խիղճն ու հրաժեշտի նամակ հղելով Եղիսաբեթին՝ առհավետ հեռանում է նրա կյանքից: Ահա այսպես է Նար-Դոսը ներկայացնում իր առաջացրած կանխադրույթի հաղթանակը: Ազգային պահպանողականության հասարակահայեցությունից սկզբնավորվող փոքր արեալի այն իդեոլոգիան հետաքրքիր այլացումներով նույն հանգուցալուծումն է ստանու Նար-Դոսի

մյուս ստեղծագործություններում: Նրա պատումներում գաղափարի գերակայությունն իրար է կապակցում ազգային արժեհամակարգի, աշխարհատեսության ժառանգորդաբար փոխանցված նշանների ու սյուժետային, «Փոքր» շարժման հանգույցները, որոնք ըստ գրողի, ամբողջական են դարձնում ինքնության ճանաչման ու շարունակականության տեքստը:

Նույն գաղափարի իրացումն խնդրադրությամբ բնության ու բարոյականության բախման նուրբ վկայումն ենք տեսնում «Քնքուշ լարեր» վիպակում: Այս ստեղծագործությունը, որ ինքը՝ հեղինակը համարում էր իր «շատ թույլ» երկերից մեկը, փոքր-ինչ ավելի լայն տեսադաշտի վրա է ցույց տալիս 20-ամյա հեղինակի կայուն ու ամբողջական աշխարհայացքը ազգային ու էթիկական որոշ խնդիրների վերաբերյալ: Զուսպ, անպաճույճ ու առանց ներքին փախուստների սյուժեի հանգույցում իշխանուհի Սոֆյան է՝ շքեղ, բնությունից օրհնյալ ու աստվածային մի կին, մի նոր Շամիրամ, որին ոչ Աստված է խնայել ինչ-որ բանում, ոչ էլ ինքն է զլացել կյանքից խլել, վերցնել այն ամենը, ինչ կարող էր անցնել փառասիրությամբ հիվանդ ու եսակենտրոնությունից երեսառած մտքի ծայրով: Սևսաթ, կրակոտ աչքերով անաստված այս գեղեցկուհին առավելապես հաջողակ, նոր աստվածուհի էր տղամարդկանց հարցում, որոնք հանդիպած պահին «քծնվող ու հավատարիմ շան նման ձեռքերը, շրջազգեստի ծայրերն էին լիզում» ու հետոյի գայթակղիչ երազանքով ստրկահաճորեն, ողորմելու անարժանապատվությամբ շուրջը պտտվում: Ի՞նչ էր տղամարդու ներկայությունն իր կյանքում, եթե ոչ անպայման իշխանուհու, հիվանդ փառասիրության հազուրդի պարզ մի քմահաճույք, աշխարհիկ վայելքի մի աննշան ու անհետևանք դիպված: Բայց պատահական մի հանդիպումը նախկին ընկերուհու ամուսնու՝ Հարունյանի հետ մեռցնում է նրա մեջ սֆինքսը, հորինված քաղքենին ու բացում ներաշխարհի այն փակ տարածքները, ուր ամենքի աչքից հեռու ապրում է անկեցվածք ու իրական կինը: Անչափ նուրբ ու զգայուն, անսահման խոր ու խորքային՝ Սոֆյան հանկարծ ճանաչում է սերն ու ինքնակամ տրվում իր իսկ պարտությանը:

Ստեղծվում է սիրային եռանկյունին: Ստվերի պես անգույն ու կրավորական Նունեն, որին բնությունն ասես ստեղծել էր ի հակադրություն Սոֆյայի, Հարունյանը՝ մեծ, հզոր, իրենով ամեն ինչ ծածկող, իրեն ենթարկող, բնավորության արտաքին սառնության տակ աշխարհից իր ներսի տաք ու խռովյալ աշխարհը թաքցրած, ու Սոֆյան՝ կին, անվերջ, անսահման կին, որ անակնկալի էր եկել բոլորովին նոր զգացողության ներխուժումից ու առաջին պահ չգիտեր՝ ինչպե՞ս վարվել իր ներսում ծնված նոր, անծանոթ մարդու հետ: «Ա՛խ, եթե դուք գիտենաք, թե այս րոպեից ինչ է կատարվում իմ մեջ... կարծես թե նոր մարդ եմ դառնում, բոլորովին նոր

մարդ, նոր հոգով, նոր զգացմունքներով, նոր ցանկություններով»: «Ստրուկ կդարձնեմ Հարունյանին»,- Ստեփանոսի սառնությանն ի պատասխան հոխորտում, սպառնում է վիրավորված կինը,- քիչ հետո. «Հարունյան, խղճա ինձ»,- պարտված, մոլորված աղերսում էր իր ներսի այն մյուսը: Հոգեբանական խոր դիտումի մի անզուգական տեսարան, որ բարձր արվեստով ու խորագույն նրբազգացությամբ իրացրել է հեղինակը: «Ձեզ առաջին անգամ պատահելու պահից ես տանջվել եմ անդադար և տանջանքս կրկնապատկվել է»,- դրամատիկ, գուցե ողբերգական լարումների այս հանգույցում առանձնակի հետաքրքրությամբ է գծվում Հարունյանի կերպարը, որն ըստ էության իր ներսում կրում է սիրո ու պարտազանցության, բնության, կրքի ու բարոյազանց չլինելու հակասության մղձավանջը. «Ո՞ւմ դեմ եմ պատերազմում: Բնության անշեղ օրենքների դեմ: Իզո՜ւր, դոն-քիշոտյան պատերազմ», ապա անցնելով երջանկության ու գտնումի խոստումնալից ճանապարհով, երբ «նրանց շուրթերը միանում են» ու տիեզերքը լցվում է մի զարմանալի խոստովանություն-աղոթքով՝ ապրել ու զգալ, որ սիրում ես, ահա մարդկային երջանկությունը,- Հարունյանն ընտրում է հոգեկեղեք ինքնահաղթահարման ճանապարհը՝ ինքն իրեն, թե մի ուրիշին փորձելով համոզել. «Հապա մարդկային վեհ գաղափարները, հապա բարոյականության սկզբունքը, հապա հասարակաց անաչառ կարծիքը, հապա խիղճը… ախ, գիտեք, թե ինչ է խիղճը»: Այս, և համանման հարցադրումով ստեղծված «Զազունյան» վեպում գրողը հասնում է իր նախասիրած թեմատիկ ընդհանրացումին՝ առավել նրբանկատ ու ճկուն դարձած գրիչը հայտնաբերում է ոչ միայն գաղափարը, այլև մարդը, ներսի մարդը՝ «հաղթանակի» մեջ այնքան պարտված, այլևս շարունակության համար անկարող ու ոչնչացած: Այս իմաստով Նար-Դոսը ոչ միայն մի բարձր գաղափարի հավատամքով է լուծում բնության ու բարոյականության հակադրությունն իր աշխարհատեսության համաբնագրում, այլև պարզապես հոգեբանական գյուտ գյուտի հետևից է մատուցում, այս վիպակներում մի կատարյալ բարձր գեղագիտությամբ ու հոգեբանական համոզչականությամբ հայտնաբերելով մարդուն, նրա ներսի աշխարհը,, թեև ինքը մինչև վերջ էլ կարծում էր, թե «դրանք բանի պետք չեն, եթե «տպված չլինեին, ես այժմ ամենայն ուրախությամբ կոչնչացնեի»: Գուցե կամ թերևս ինչ-որ բան թերի է այս գործերում, բայց հստակ է հարցադրումը. բնական նախասկիզբը, սեռային բնազդը կամ կենսաբանությունը, որ մշտապես թաքնված ու անմեկնելի ուղեկցորդն է մարդկային գոյության, հանդիպադրվում է մարդկային ինքնագիտակցմանը կամ անձնաքննության՝ որոշելու այլևս դեպի ո՞ւրի ճանապարհը: Եթե ճակատագրով նախասահմանված է շեղումը, կամ «մեղքի» հետ հանդիպումըապա

բանականությունը, որ սև ու դաժան քրմապետն է մեր գոյության, կոչված է սահման դնելու երազի ու իրականության, Սիրո (որ նրա համար նույնական է մեղքին), ու Աստծո միջև, կամքի և բարոյականության բացարձակությամբ բառնալու ամեն տեսակի մարդկային ու բարոյական շեղում: Իսկ այս պատմության մեջ Նար-Դոսը փորձում է ստուգել գաղափարի ու իրականության հարաբերության սահմանը՝ բարքերի արատավոր շեղման, նոր արժեքների ներխուժմանպատմական տեղաշարժերի ու գոյության հազարամյա միֆոլոգիայի, բանահյուսության բեկման հոգեբանական սարսափը փորձելով լուծել ազգային արժեհամակարգի, հայկական ինքնության ու գոյության հայկական նշաններիի պահպանման ուտոպիայում:

С. Маргарян

Легенда о Доме, заверенным прожитым

Резюме

Нар-Дос - один из выдающихся представителей армянской классической литературы. Начав свою литературно-творческую деятельность в трудное историческое время, когда возникло глубокое несоответствие между либеральными мыслителями и национальными консерваторами, писатель связал свою деятельность с «Нор Дар (Новый век)», в соответствии с которым формируя свою эстетическую концепцию.

В статье рассматривается проблема противоречия между природой и моралью в искусстве Нар-Доса. Естественно, с приоритетом системы моральных ценностейрешается идея его романов. В этом контексте мы рассматриваемнекоторые из его работ: «Правдивый друг», «Нежные струны», «Зазанян».

S. Margaryan

The legend of the living-attested House

Summary

Nar-Dos is one of the outstanding representatives of Armenian classical literature. Starting his literary-creative activity in difficult historical time when there has been arisen a deep discrepancy between the liberal thinkers and the national-conservatives, the writer connected his activity to “Nor dar (New age)” and according to his aesthetic concept has been formed.

The article reviews the problem of contradiction between the nature and the morality in Nar-Dos’s art. Naturally, the idea of his novels is solved with the priority of moral value system. In this context, we are referring to his several works: “True friend”, “Tender strings”, “Zazanyan”.